



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ. Ա. Շ Մ Ի Գ Տ

# ԻՆՉ ՊԵՏք Ե ԻՄԱՆԱ ԳՅՈՒՂԱՑԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԹԱՐԳԱ. ԱՌԱԽԵՐԵԼԻՑ

Յիւլիոսը հրատարակություն

---

ՀՐԱՏԱՐԱԿ. Հ.Ս.Խ.Հ. ԳՅՈՒՂԱՏԱՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ

ՅԵՐԵՎԱՆ 1927



Գ. Ա. Շ Մ Ի Դ Տ Տ

338.1K (09)

Ը




ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ԳՅՈՒՂԱՑԻՆ  
ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

A 4534

ԹԱՐԳՄ. ԱՌԽԵՐԵՆԻՑ

Յերկրորդ հրատարակություն



ՀՐԱՏԱՐԱԿ. Z.U.N.Z. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

Գրառեպիլար 108ր.

Տիրամ 3000.

---

Տպարան «Հերմես» Հրատարակչության, Մալքոնի փող. № 29.

## ԻՆՉ ՊԵՏք Ե ԻՄԱՆԱ ԳՅՈՒՂԱՑԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամեն մի գյուղացու տնտեսության համար փող ե հարկավոր, բայց ամեն գյուղացի փող չի տևնենում, իսկ առանձին գյուղացիների համար փող ճարելը բավական դժվար է, վորովհետեւ շատ քչերն են վստահում փող տալ, և յեթե նույնիսկ վստահեն, այդ վստահությունն ել եժան չի նըստի վերցնողի վրա:

Ուրիշ բան է, յեթե մի քանի գյուղացի հավաքվեն միասին, համաձայնվեն պատասխանագություն հանձն առնել միմիանց համար և վարկային ընկերություն կազմեն: Այդպիսի ընկերությանը կը վստահեն փող տալ, իսկ ընկերությունն ել իր կողմից փոխառվություն (փոխարինաբար տրվող վորեն գումար) կըտա առանձին գյուղացիների, վոր անդամակցում են ընկերությանը:

Փող կըտան միայն այնպիսի վարկային

ընկերության, վորը դործում ե առանձին կանոնագրությամբ (կանոններով) և յեթե բոլոր ժամանակցողները խոստանան կատարել այն ամենը, ինչ վոր պահանջում ե այդ կանոնադրությունը՝ իսկ դրա համար հարկավոր ե, վոր ամեն մի մասնակցող, այսինքն ընկերության ամեն մի անդամ իմանա, թե ինչ ե պահանջում նրանից կանոնագրությունը, և թե վորքան ձեռնառը յենրա համար ընկերության մեջ մտնելը, ինարկե, ամեն մի գրագետ մարդ կարող ե կարդալ կանոնադրությունը, վորտեղ շատ մանրամասնություններ կան, վոր ավելի շատ ընկերության վարչությանն են հարկավոր, քան անդամներին, և դրա համար ել այդ գրքույկում մենք մեր խոսքերով կը պատմենք այն, ինչ անպատճառ պետք ե իմանա վարկային ընկերության յուրաքանչյուր անդամ:

Ամեն մի վարկային ընկերություն ունի իր առանձին անունը, վորը նշանակվում ե կանոնագրության մեջ, վորտեղ նմանապես գրվում ե, թե վոր գյուղում պետք ե տեղափորվի ընկերության գրասենյակը և վոր շրջանի գյուղացիները կամ նրանց միությունները կարող են մտնել ընկերության մեջ իրեն անդամ: Զե՞ վոր ընկերությունը կազմակերպվում ե տեղական գյուղացիների և վոչ ոտար մարդկանց համար,

վորովհետև տեղացիները միմիանց լավ են  
ճանաչում, ուստի և չեն վախենա միմիանց  
համար պատասխանատվություն հանձն առնել:

Ի՞նչու համար ե կազմակերպվում ընկերությունը: Նրա համար, վորպեսզի վորոշ ժամանակով փոխատվություն տա իր անդամներին: Բայց փողը տրվում է միայն Տեսեսության կարիքների համար, այնպես, վոր վերցնողին այդ փողն ոգուտ տա, յեվ մեկ ել վոր վերցնողը կարողանա ժամանակին վերադարձնել իր պարտի ընկերությանը:

Ընկերությունը կազմակերպվում է նմանապես այն նպատակով, վորպեսզի ամեն զյուղացի, վորն ունի ժամանակավորապես ազատ փող կամ խնայած (յետ դրած) գումարներ, պահ տա ընկերությանն իրենվ ավանդ, վորպեսզի փողն իզուր տանը չըմնա, այլ յեկամուտ տա Տիրոջը յեվ միաժամանակ ծառայի ուրիշների ոգտին:

Վերջապես, ընկերությունը կազմակերպվում է այն նպատակով, վորպեսզի ոգնի իր անդամներին նրանց անտեսության համար անհրաժեշտ սերմացու, անասուններ, գութան և այլ մեքենաներ գնելու և բերքի ավելցուկը ծախելու համար:

Չե վոր խմբով թե առնելը և թե ծախելը անհամեմատ ավելի ձեռնտու գներով ե կատարվում, քան առանձին-առանձին:

Վորպեսզի ընկերությունը կարողանա այդ  
քանն անել, կանոնագրությունը թույլ ե տալիս  
փող հավաքել անդամներից, փոխարինաբար փող  
վերցնել քաղաքի բանկերից և այլ հաստատու-  
թյուններից և մասնավոր անձերից, ավանդներ  
ընդունել, փոխատվություն տալ անդամներին,  
պահեստներ շինել ապրանքները պահելու համար:

Ընկերությունը մեծ իրավունքներ ունի:  
Այսպես, նա կարող է պայմանագրեր կնքել,  
պարտավորություններ հանձն առնել, դատարա-  
նի միջոցով իր պարտապահների և այլ անձնա-  
վորությունների վերաբերմամբ փողի և կայքի  
հետ կապ ունեցող պահանջներ անել, և ընդհա-  
կառակը, պատասխանառությունը լինել առաջադրված  
պահանջների համար:

Բայց ընկերությունը կարող է անել միայն  
այն, ինչ վոր թույլատրվում է կանոնագրու-  
թյամբ և վոչ այն, ինչ վոր ցանկանա: Որինակ,  
ընկերությունը չի կարող ամեն տեսակ ապրան-  
քի առևտուր անել կամ փոխարինաբար փող-  
տալ կողմանակի մարդկանց, վոչ անդամներին:  
Պետք է յավ իմանալ, վոր ընկերությունը բո-  
լոր պարտերի յեվ իր կրած բոլոր վճարների  
համար պատասխանառ յե իր ամբողջ կայտով  
յեվ բոլոր միջոցներով, յեվ բացի դրանից, ըն-  
կերության ամեն մի անդամ պատասխանառ  
յե իր ընկերության պարտերի համար:

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱ-  
ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ընկերությանը կարող են անդամակցել բո-  
լորը, ովքեր 18 տարեկանից փոքր չեն և կանո-  
նադրությամբ նախատեսնված շրջանում պարա-  
պում են գյուղատնտեսությամբ կամ վորեե տը-  
նայնագործական արհեստով։ Ընկերությանը կա-  
րող են անդամակցել նաև այն կոռպերատիվնե-  
րը, ընկերությունները և այլ միությունները,  
վորոնց գրասենյակները գտնվում են ընկերու-  
թյան շրջանում։

Ամեն մի այդպիսի միություն համարվում  
է մեկ անձ։

Ով անդամակցում է մի վարկային ընկերու-  
թյան, նա չի կարող մտնել մի ուրիշ ընկերության  
մեջ։ Նոր անդամներն ընդունվում են ընդհանուր  
ժողովում, բայց ընդհանուր ժողովը կարող ե  
այդ գործը հանձնել վարչությանը, կամ վար-  
չությանը և խորհրդին միասին։ Նրանք, ում  
վարչությունը մերժել ե ընդունել ընկերության  
մեջ, կարող են հարցը տեղափոխել ընկերության  
ընդհանուր ժողովը։ Իսկ ընդհանուր ժողովի վո-  
րոշման դեմ չի կարելի բողոքել, վորովհետև վոչ  
վոք չի կարող ստիպել ընկերության անդամնե-

թին իրենց շարքերն ընդունել այնպիսի մարդու,  
վորին նրանք չեն ցանկանում ընդունել:

Նմանապես վոչ վոքի չի կարելի անդամագրել ընկերությանը, առանց նրա հոժար կամքի: Ընկերության մեջ մտնել ցանկացողը գրավոր դիմում ե տալիս ընկերության վարչությանն այդ մասին, վորտեղ հայտնում ե, թե ցանկանում ե ընդունվել ընկերության մեջ և վարկ ստանալ և խոստանում ե կատարել ընկերության կանոնադրության մեջ յեղած վորոշումները և պատասխանատվություն ե հանձն առնում ընկերության գործերի համար:

Ընկերության մեջ ընդունված անդամը պարտավոր ե մուտքի վճար տալ ընկերությանը և բացի գրանից, ամենաքիչը մի փայ վերցնել: Մուտքի վճարը նա հետ չի ստանա, իսկ փայավճարը, ընկերությունից հեռանալու դեպքում, վորոշ ժամանակից հետո կը վերադարձի նրան:

Ընկերության ամեն մի անդամ, ինչպես վոր իր հոժար կամքով մտնում ե ընկերության մեջ, նույնպես կարող ե իր ցանկությամբ հեռանալ ընկերությունից, դիմում տալով այդ մասին: Բայց նա միանգամից դուրս յեկած չի համարվում, այլ նա այդպիսին համարվում ե միայն գործառնական տարվա վերջին, յեթե դիմումը տվել ե վոչ պակաս, քան յերեք ամիս առաջ:

Ընդհանուր ժողովը նմանապես կարող է հեռացնել անձշտապահ անդամին, յեթե նա առանց հարգելի պատճառների պարտքերը չի վերադարձնում կամ վորևե վնաս ե պատճառում ընկերությանը։ Այդ կարգով հեռացված անդամին նորից կարող է ընդունել ընկերության մեջ միայն ընդհանուր ժողովը, և վոչ վարչությունը։

Ընկերության յուրաքանչյուր անդամ պատասխանատու յե վոչ միայն իր սեփական պարտքերի համար, այլև մյուս անդամների հետ միասին պատասխանատու յե ընկերության պարտքերի համար, յեթե ընկերությունն ինքը չի կարողանում վճարել։

Իսկ վորքան մեծ ե ամեն մի անդամի այդ լրացուցիչ պատասխանատվությունը ընկերության պարտքերի հանդեպ։ Այդ մասին պետք ե տեղեկություն վերցնել կանոնադրությունից, վորովհետև զանազան ընկերություններում զանազան տեսակի պատասխանատվություն ե լինում։ Մի քանի ընկերություններում անդամները պատասխանատու յեն իրենց ամբողջ կայքով, մինչև վոր ընկերությունը կը վճարի իր պարտքը լիովին, իսկ ուրիշ ընկերություններում, վորոնք մեծամասնություն են կազմում, ամեն անդամ նախորոք զիտե, թե այն դեպքում, յեթե ընկերությունը չը կարողանա իր

պարտքերը վճարել, ինչքան կըպահանջվի իրենից ամենաշատը։ Դա կախված է այն վստահությունից, վոր ցույց եւ տվել նրան ընկերությունը։ Արինակ, յեթե ընկերությունը, անդամի դիմումի համաձայն, վստահել է նրան տալ 50 ռ. պարտք, բայց անդամն այդ վարկից չեղագավել միևնույն ե, նա պատասխանատու յելնկերության պարտքերի համար յերկու անդամավելի գումարով, քան իր վարկն ե, այսինքն պատասխանատու յել 100 ռ. գումարով, յեթե այդպես ե նախատեսնված ընկերության կանոնադրության մեջ։ Իսկ յեթե կանոնադրության մեջ ասված ե, վոր նա պատասխանատու յել յերեք կամ հինգ անդամ ավելի գումարով, նշանակում ե նրանից կըպահանջեն 150 ռ. կամ 250 ռ.։

Ընկերությունից դուրս գալուց հետո անդամը պատասխանատու յել մնում ընկերության հին պարտքերի համար մեկ տարվա ընթացքում, և ավելի յերկար ժամանակ, յեթե ընկերությունը փակվի ավելի շուտ, քան մեկ տարին անցնելուց հետո։

Հենց նրա համար ել ընկերությանը մեծ գումարներ են վստահում, վոր բոլոր անդամները պատասխանատու յեն այդ գումարների համար։ Նշանակում ե, ով ցանկանում ե, վոր ըն-

կերությունը փոխարինաբար փող տա նրան,  
նա պետք է համաձայնի պատասխանատվություն  
հանձն առնել ուրիշների համար, վորոնք նույն-  
պես պատասխանատվություն են հանձն առ-  
նում նրա համար:

Շատերը հարց կըտան՝ «թե արդյոք վտան-  
գավոր չե՞ ուրիշների համար պատասխանատվու-  
թյուն հանձն առնելը»։ Այն, վտանգավոր ե, յե-  
թե անդամները վերաբերվեն իրենց ընկերու-  
թյանն այնպես, ինչպես մի ոտար գործի, ինչ-  
պես մի բանկի, վորից փող ե ստացել և հետո  
ել մոռացել նրա մասին մինչև վճարելու ժա-  
մանակը հասնելը։ Բայց պատասխանատվու-  
թյունը բոլորովին վտանգավոր բան չե, յեթե  
անդամները մասնակցեն ընդհանուր ժողովներին,  
յեթե նրանք ընկերության վարչության և խոր-  
հրդի կազմի մեջ ընտրեն վոչ թե պատահական  
մարդկանց, այլ նօտապահ, բարեխիղն, բոլորի  
վստահությունը վայելող, բոլորին ծանոթ մարդ-  
կանց, և, վերջապես, յեթե իրենք անդամ-  
ները ժամանակին վճարեն ընկերությանն ի-  
րենց պարտքը և ուրիշներին ել ստիպեն ճշտա-  
պահ լինել:

## ՎՈՐՏԵՂԻՑ Ե ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՂ ՍՏԱՌՈՒՄ

Վորպեսզի ընկերությունը կարողանա աշխատել, ամենից առաջ նրան փող ե հարկավոր, այնպիսի գումարներ, վոր պետք ե յերկար ժամանակ մնան ընկերության մոտ։ Յեթե այդպիսի գումարներ չունենա ընկերությունը, կարող ե պատահել, վոր կարճ ժամանակով ստացված փողը տրվի իբրև փոխատվություն, իսկ աշխատանքը շարունակելու համար այլևս փող չը լինի, և ընկերությունը ստիպված կըլինի դադարեցնել իր գոյությունը։

Իսկ վո՞րտեղից ճարել այնպիսի գումարներ, վոր յերկար ժամանակ կամ մշտապես մնան ընկերության մոտ, վոր լինեն նրա հիմքը։

Ծնկերության կանոնադրության մեջ այդպիսի մնայուն գումարները կոչվում են նիմունական դրամագլուխ, վորն ըստ այդ կանոնադրության գոյանում ե հետեւյալ աղբյուրներից՝

Նախ՝ անդամների մուծած փայավճարներից.

Յերկրորդ՝ ընկերությունը կարող ե յերկար ժամանակով փոխառություն կնքել.

Յերրորդ՝ անդամների ընդհանուր ժողովը կարող ե վորոշել, վոր յուրաքանչյուր անդամ վորոշ գումար փող տա ընկերությանը.

Զորբորդ՝ ընկերությունը պետք ե տարեզիրջի յեկամուտից վորոշ գումար թողնի ընկերության շրջանառության համար.

Յեկ հինգերրորդ՝ ընկերությունը կարող ե նվերներ ընդունել:

Ընկերության ամեն մի անդամ պետք ե վերցնի ամենաքիչը մեկ փայ, վորի գումարը ցույց ե տրված կանոնադրության մեջ:

Բայց կարող են հարց տալ. «Լավ, զյուղացին անդամագրվում ե ընկերությանը, փայավճար ե տալիս նրան, վորապեսզի այնտեղից փողվերցնի իր կարիքների համար, բայց ինչու պետք ե, մյուս կողմից, ինքը փող տա ընկերությանը»:

Իսկ մենք դրան կըպատասխանենք, վոր սխալ ե, յերբ ընկերությանն անդամագրվում են միայն նրանք, ովքեր փողի կարիք ունեն:

Չե՞ վոր ընկերությունը բոլորին ել պետք կըդա: Վոմանց պետք կըդա ընկերությունը՝ նրաբամբակը, դինին, ցորենը ծախելու համար, վոմանց՝ փող վերցնելու համար, վոմանց ել՝ գործիքներ և այլ պիտույքներ ձեռք բերելու համար: Որինակ, յեթե 1200 ծուխ ունեցող շըրջանից 1000 ծուխն ե անդամագրվում ընկերությանը, և յեթե ամեն մի անդամը—10 ռ. փայավճար լինելու դեպքում—գոնե 5 ռ. մուծիր

ընկերության դրամարկղը, նշանակում ե, ընկե-  
րությունն այդպիսով կունենա 5000 ռ. հաստա-  
նուն կամ, ինչպես կանոնադրության մեջ ե  
ասված, հիմնական դրամագլուխ։ Այն ժամանակ  
պարզ կըլինի, վոր գյուղացիներն իրենք հույս  
են գնում իրենց գործի վրա։ Իսկ յեթե այդպես  
լինի, այն ժամանակ ուրիշներն ել կըվստահեն  
ընկերությանը։ Յեվ Գյուղբանկն այդպիսի ըն-  
կերությանը լավ աչքով կընայի, փող կըտա  
նրան յերկար ժամանակով, փող կըտա հենց նրա  
հիմնական դրամագլուխը լրացնելու կամ ուժե-  
ղացնելու համար, կըտա վոչ միայն 3000 ռ.,  
4000 ռ., այլ գուցե և տա միչև 10000 ռ., և  
բացի դրանից կարճ ժամանակով մի տասը—քսան  
հազար ռ. ել կըտա գործն սկսելու համար։ Յեվ  
մեկ ել տեսանք, վոր ընկերության մոտ հավաք-  
վեց 20—25 հազար ռուբլի գումար, այսինքն՝  
ամեն մի տնտեսության՝ 20—25 ռուբլի։ Բայց  
բոլորին միաժամանակ փող հարկավոր չի լինում,  
ուստի և փող վերցնողներն ել կարող են ավե-  
լի շատ ստանալ։ Այսպիսով, շնորհիվ 5 ռ. փա-  
յափնարի, վոր կազմում ե վճարողի սեփակա-  
նությունը, և վորը նա կարող ե հետ ստանալ  
ընկերությունից դուրս գալու գեպքում, անդամ-  
գյուղացին հնարավորություն ե ձեռք բերում  
ընկերությունից վերցնել 40 կամ 60 ռ. և ավե-

Ա գումարի փոխատվություն։ Իսկ այդ գումարը, յերե ծախսվի ողտակար բանի վրա, ևս ու շատ յեկամուս կըտա անդամին, ավելի, քան երա մուծած 5 ռուբլին է։

Բացի դրանից, չե՞ վոր բոլոր անդամները միասին և ամեն մեկն առանձին՝ ընկերության տերն են։ Ուրեմն ել նա ի՞նչպիսի տեր ե, վոր վոչինչ չի դրել իր գործի մեջ, և միայն նայում ու սպասում ե, վոր մի բան կարողանա ստանալ ընկերությունից։

Վորպեսզի դյուզացիները կարողանան հեշտությամբ վճարել իրենց փայտումարը, կանոնադրությունը թույլ ե տալիս, վոր փայտագորը մաս-մաս մուծվի (վճարվի)։ Բայց իհարեւ, ավելի լավ ե, վոր կարող անդամները մի քիչ նեղություն տան իրենց և աշխատեն, վրքան կարելի յե շատ վճարել։ Դա ձեռնտու կը լինի նաև իրենց համար, ինչպես քիչ առաջ բացատրեցինք։

Դժբաղգաբար, քիչ ե պատահում, վոր ընկերությունը կարողանա այնքան փայտվճար գանձել իր անդամներից, վոր սկսի իր աշխատանքը։ Դրա համար ել ընկերությունն ստիպված ե լինում փախատվություն վերցնել Գյուղբանկից, վորը նրան փող ե տալիս հիմնական դրամագլուխն ուժեղացնելու համար և տալիս ե յերկար ժա-

մանակով, Յ տարով, և շատ ցածր տոկոսներով ը  
Ընկերությունն իր պարտքը մաս-մաս ե վերա-  
դարձնում Գյուղբանկին, իսկ մյուս կողմից ին-  
քըն անդամներից փայտվարներ ե հավաքում-  
Փող տալով ընկերությանը, Գյուղբանկը պահան-  
ջում ե, վոր այդ գումարները ծախսվեն միայն  
գյուղատեսության վերականգնան յեվ զար-  
գացման համար, բայց վոչ ընկերության կամ  
անդամների գանազան կարիքների համար:

Վորովինետե, ինչպես ամեն գործում շահից  
ու վաստակից բացի, մնաս ել ե պատահում,  
ուստի և կանոնադրությունը պահանջում ե, վոր  
տարվա զուտ յեկամուտից, ամենաքիչը, չորրորդ  
մասը յետ դրվի, կամ ինչպես առում են, թող-  
նը իրեն պահեստի փող, վորպեսզի մնաս լի-  
նելու դեպքում, այդ պահեստի գումարներով  
ծածկվի մնասը և անդամներն ստիպված չը լի-  
նեն իրենց գրպանից վճարելու։ Այդպիսի յետ  
դրած պահեստի գումարները կանոնադրության  
մեջ կոչվում են պահեստի դրամագլուխ։


Բացի դրանից, ընկերությունը կարող ե  
փող վերցնել շահից, կամ անդամների վորեե-  
խմբից կամ հատուկ փոխառություն կնքել և  
կատարել այնպիսի տնտեսական շրջանառու-  
թյուններ, վորոնք առանց այդ բանի չեն կարող  
կատարվել։ Որինակ, ջրաղաց շինելու և բանեց-

նելու համար ընդհանուր փողից վոչ մի կոպեկ  
չի կարելի ծախսել, դրա համար հարկավոր ե ա-  
ռանձին գումարներ ճարել, վոր կանոնադրության  
մեջ կոչվում են հատուկ դրամագլուխ, վոր ա-  
ռանձին նպատակների յեւ ծառայում:

ԻՆՉՈՎ ՊԵՏՔ Ե ՅԵՎ ԿԱՐՈՂ Ե ԶԲԱՂՎԵԼ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

A 4534

1. Ընկերությունն ավանդներ ե ընդունում  
Դա նշանակում ե, վոր ամեն մեկը, ով խը-  
նայած, յետ դրած փող կամ ժամանակավորա-  
պես ազատ գումարներ ունի, նա փոխանակ  
այդ փողի իզուր տանը պահելու, կարող ե տալ  
ընկերությանը վորու ժամանակով, կամ պայ-  
ման դնել, վոր այդ փողը վերադարձվի իրեն  
ամբողջովին կամ մաս-մաս այն ժամանակ,  
յերբ պահանջի ինքը կամ այն անձնավորու-  
թյունը, վորի անունով փողը հանձնված  
ե ընկերությանը: Այդ պայմանների մասին կու-  
րելի յեւ համաձայնության դալ ընկերության հետ,  
վորը փող տվողին անվանական գրքույկ ե տա-  
լիս: Ընկերության պահ տրված այդպիսի գու-  
մարները ավանդ են կոչվում: Ավանդների հա-



մար լինկերությունը տոկոս է վճարում ավանդ և սկզբին, նայած թե ինչքան ժամանակ ե փողը մնալու ընկերության մեջ։ Իսկ ընկերությունն այդ փողը շրջանառության մեջ ե գնում, այդ գումարներից փոխատվություն ե տալիս այն անդամներին, վորոնք կարիք ունեն։ Ընկերությունը կարողանում ե տոկոսներ վճարել ավանդ տվողներին շնորհիվ այն բանի, վոր ինքը նույնապես տոկոս ե վերցնում փոխառուներից (այն անդամներից, վորոնք փոխատվություն են ստանում)։

Բայց կարող են հարց տալ. «Իսկ ի՞նչպես ե ընկերությունը վերադարձնելու ավանդ տվողին իր փողը, յեթե նա բաժանել ե ավանդը»։ Բանն այն ե, վոր բոլոր ավանդ տվողները միանգամից չեն գտ պահանջելու իրենց ավանդը, իսկ մի քանիսին բավարարելու համար ընկերությունն իր մոտ միշտ փող պահում ե։ Իսկ այն դեպքում, յեթե փողի մեծ կարիք լինի, և ընկերությունը չունենա հարկավոր փողը, նա կարող ե պակասը վերցնել Գյուղբանկից։

Ընկերության ամեն մի անդամ պետք ե աշխատի, վոր ինչքան կարելի յեւ շատ ավանդ վաճի ընկերությունը, քեկուզ փոքր գումարներով։ Դա բոլորի համար ել ձեռնտու յեւ։ Դա ձեռնտու յեւ ավանդ տվողի համար, վորովհետեւնա յեկամուտ

Ալստանա իր ավանդի դիմաց և փողն ել ապահով տեղում կը լինի, իզուր չի ծախսվի։ Դա ձեռնտույի ընկերության համար, վորովհետեւ վորքան նա շատ ավանդ ունենա, այնքան շատ վստահություն կունենա Գյուղքանկի մոտ՝ շատ փող ստանալու համար։ Յեվ, վերջապես, դա ձեռնտույի առանձին անդամների համար, վորոնք այդպիսսվ շատ փոխատվություն կը ստանան ընկերությունից։

Ասում են, վոր գյուղացիներից վոմանք չեն վստահում ընկերությանը և դրա համար ել ավանդ չեն տալիս նրան։ Դա նշանակում ե, վոր գյուղացիներն իրենք իրենց չեն վստահում, վորովհետեւ ընկերությունն իրենց ընկերությունն ե, և վոչ ուրիշներ։ Հապա ինչպես ե ընկերությունը վստահում առանձին գյուղացիներին և փող ե տալիս նրանց, իսկ առանձին գյուղացիները չեն վստահում մի ամբողջ ընկերության։

Կան գյուղացիներ ել, վորոնք բոլորովին չեն ցանկանում, վոր ուրիշներն իմանան, թե նրանք այս կամ այն գումարով փող ունեն ընկերության մոտ։ Այդպիսիները չըպետք ե վախենան, վորովհետեւ որենիք խսիր, օտա խսիր արգելում ե, վոր ընկերության վարչության անդամները կամ ծառայողները վորեն մեկին, բացի գատական և քննիչ իշխանությունից, հայտնեն, թե այսինչը կամ այնինչը ընկերությանը տված

**Փող ունի:** Այդ որենքը խախտողները յենքարկ-  
վում են քեական պատճի:

## 2. Ընկերությունը կարող է փոխափուրյուն վերցնել ուրիշից

Ընկերությունը փոխառություն և կնքում՝  
գլխավորապես Գյուղբանկում, Մենք արդեն ա-  
սացինք, վոր ընկերությունը Գյուղբանկից յեր-  
կարատե փոխատվություն և ստանում իր աշ-  
խատանքն սկսելու համար: Բացի դրանից, Գյուղ-  
բանկը տալիս է վարկային ընկերություններին  
նաև կարճատե (կարճ ժամանակով) փոխատվու-  
թյուններ, և այդպիսի գումարներ տալու ժա-  
մանակ ել ցուցմունք է տալիս փողաստացող ըն-  
կերությանը, թե ինչ նպատակի պետք է ծառա-  
յեցնի ընկերությունն այդ փոխատվությունը:

Գյուղբանկը փոխատվություն և տալիս ըն-  
կերություններին այն զեպքում միայն, յերե-  
քնիկերությունը նշանակված ժամանակին է վե-  
րադարձնում բանկից վերցրած գումարները, իսկ  
քնիկերությունը կարող է նշանապահ լինել միայն  
այն ժամանակ, յերեք անդամները ժամանակին  
վերադարձնեն իրենց պարտեն քնիկերությանը:  
Նշանակում է, վոր ընկերության անդամներից ե-  
կախված այն, վոր գյուղբանկն ընկերությանը փո-  
խատվություն տա:

Բանկը, սովորաբար, մինչև ընկերությանը  
փող տալը, միշտ հետաքրքրվում է այն հարցով,  
արդյոք զյուղացիները ավանդ տալիս են ընկե-  
րությանը, թե չե, յեվ վորքան ուս լինեն ա-  
վանդները, այնին բանկը նետ ու սիրով փող  
կըսա ընկերությանը, գորովհետեւ նա տեսնում է,  
վոր ընկերությանը կարելի յե վստահել։ Դրա  
համար ել բոլոր անդամները պետք է աշխատեն,  
վոր շատ ավանդ մտնի ընկերությունը։

### 3. Ընկերությունը պետք է փոխատվություն- ներ սա

Ընկերությունը փոխատվություն է տալիս  
միայն իր անդամներին, իսկ կողմանակի մարդկանց  
նա չի կարող փող տալ։ Իր անդամներին ել ըն-  
կերությունը կարող է փող տալ միայն զյուղա-  
տեսներին կամ վորեվիե զյուղական արհեստի  
աեսերի համար։ Դա նրա համար է, վոր փոխա-  
տվություն վերցրած անդամը կարողանա պարտ-  
քը ժամանակին վերադարձնել, իսկ նա կարող է  
պարտքը ժամանակին վերադարձնել ընկերությա-  
նը միայն այն դեպքում, յեթե նա ստացած փո-  
ղը գործադրել է ոգտակար բանի համար, վորը  
նրան թե յեկամուտ կըտա և թե հնարավորու-  
թյուն՝ պարտքը վճարելու։ Որինակ, յեթե զյու-  
ղացին ընկերությունից ստացած փողով գութան

Ե գնել, նշանակում ե, վոր նա գութանը կը բանեցնի և յեկամուտ կըստանա, յեթե նա այդ փողով կով ե գնել, մենք գիտենք, վոր կովն ել կաթ, յուղ, պանիր ե տալիս, վորի գյուղացին ծախելով, յեկամուտ ե ստանում: Իսկ, որինակ, հարսանիքի կամ հագուստի համար ընկերությունը փող չի տալիս, վորովհետեւ դրանից վոչ մի յեկամուտ չի ստացվում, այլ միայն անվերադարձախք ե առաջ բերում տնտեսության մեջ: Ընկերության այն անդամը, վորն ուզում ե փոխատվություն ստանալ ընկերությունից, պետք ե գիմում տա ընկերությանը և հայանի, թե ինչ կարիքի համար ե նա փող վերցնում ընկերությունից, և յեթե նա փող ստանա, պետք ե ստացածը ծախսի այն բանի վրա, ինչի համար վարկ ե խնդրել: Իսկ յեթե նա փոխատվությունը ծախսի ուրիշ պետքերի համար, մանավանդ վոչ տընտեսության վրա, այդ պետքում ընկերությունը կարող ե փողը հետ պահանջել նրանից՝ վորուված ժամանակից ըստ:

Փոխատվությունների համար ընկերությունը զանազան ժամկետներ ե նշանակում, նայած թե ինքն ինչ ժամկետներով ե վճարելու Դյուդըանկին իր պարագերը և յերբ ե վերադարձնելու ավանդները տերերին:

Ընկերությունից փող վերցնող անդամի ա-

ուաջին պարտականությունն այն ե, վոր նա,  
առանց մեկ որ ուսացնելու պես ե ժամանա-  
կին վճարի պարտը: Յեզ դրա համար ել պետք  
ե փոխատվություն վերցնել միայն այն դեպ-  
քում, յեթե վստահություն կա, վոր ժամանա-  
կին փող կը լինի պարտքը վերադարձնելու հա-  
մար: Յեթե ընկերության նշանակած ժամկետը  
չի համապատասխանում փող վերցնողի հարմա-  
րություններին, և ընկերությունը հնարավորու-  
թյուն չի ունենում փոխել ժամկետը, ավե-  
լի լավ ե բոլորովին հրաժարվել փոխատվու-  
թյունից, քան դառնալ անձտապահ փոխառու,  
և թե իր վարկը դցել և թե վնաս տալ ընկե-  
րությանը:

Ամեն անգամ, յերբ վորեե նոր անդամ ե  
ընդունվում ընկերության մեջ, ընկերության  
վարչությունը կամ վարչությունը խորհրդի հետ  
միասին վորոշում ե, թե ինչքան փոխատվու-  
թյուն կարելի յե տալ այդ անդամին, կամ ինչ-  
պես ասված ե կանոնադրության մեջ, ինչքան  
վարկ (վստահություն) կարելի յե բանալ այդ  
անդամի համար: Որինակ, յերբ վորոշում են  
35 ո. գումարի վարկ բանալ, դա նշանակում ե,  
վոր այդ գումարից ավելի անդամը չի կարող  
փոխատվություն վերցնել ընկերությունից:

Վորակեսզի վորոշեն, թե ինչքան վարկ կա-

քելի յե բանալ անդամի՞նամար, կարչության և խորհրդի անդամները, յեթե իրենք չեն ճանաշում այդ անդամին, պետք ե նրա հարկանաներից իմանան, թե ինչպիսի մարդ ե նա, աշխատասե՞ր ե արդյոք, ազնիվ ու բարեխիղձ ե, և հետո, ինչքան նա յեզ, կով և այլ տեսակի կայք ունի: Քիչ չի պատահում, վոր կայֆով յեվ ունեցվածքով աղքատ, բայց աշխատափրությամբ հարուս գյուղացին ավելի մեծ վսանուրյունն է ունենում ընկերության մոտ, քան ունեվոր գյուղացին, վորն անբարեխիղն յեվ անհետապահ է, կամ հորբեցող է: Այդ բոլորը պետք ե լավ իմանան ընկերության վարչությունն ու խորհուրդը յեվ դրա համեմատ ել զործանեն:

Զքավորները փողի ավելի մեծ կարիք ունեն իրենց տնտեսությունը կառավարելու համար, իսկ ճարելը նրանց համար ավելի դժվար է, քան ունեվորների համար, ուստի և նրանք ավելի կարիք ունեն ընկերության ոգնության:

Բայց ընկերության անդամ բոլոր գյուղացիները պետք ե լավ իմանան մի բան՝ վոր ընկերությունը վոչ վոֆի, նույնիսկ ամենաշխավոր գյուղացուն անվերադարձ նպասներ չի կարող Տալ, յեվ անդամին ՏՐՎԱԾ ամեն մի կոպեկը պետք ե ժամանակին վերադավի:

Ընկերության անդամների ընդհանուր ժողովը պետք է վորոշի, թե ինչքան փոխատվություն պետք է, ամենաշատը, արվի մի անդամին, թեկուզ այդ անդամն ավելի մեծ վստահություն ունենա ընկերության մոտ։ Դա այն նպատակով է արված, վոր բնիկերության համես գումարները չընկնեն մի քանի մարդու ձեռք, իսկ մյուսները գրկվեն դրանից։

Իհարկե, չի կարելի ընկերության մոտ յեղած փողը հավասար չափով բաժանել անդամների մեջ։ Դա խելացի բան չի լինի և ահա թե ինչու։ Ասենք, որինակ, ընկերության մոտ յեղած գումարները բաժանեցին, և ամեն մեկին հասավ 15 ռ.։ Այդ 15 ռ. կարող է մեկի համար բավական լինել, յեթե նա, յենթաղրենք, սերմացու յեգնում, իսկ մյուսին, վորը պետք է 70 ռ. կով գնի, չի բավականացնի, 55 ռ. կըպակսի, և ստացած փողը գործի համար չի ծախսվի, և վերջն ել տալը շատ դժվար կըլինի։ Իսկ խելացի կարդը այսպես պետք է լինի. ընկերության վարչությունը պետք է տա, իսկ ընկերության անդամը պետք է վերցնի միայն այնպիսի փոխատվություն, վորով իրոք հնարավոր կըլինի նոգալ այն ՏԵՍՏԵՍԱԿԱՅԻ կարիքը, վորը նոգալու համար փող է վերցնում անդամ-գյուղացին։ Առապեսզի ավելի պարզ լինի, բերենք նույն

որինակը։ Գյուղացին ուզում ե կով գնիլը  
կովս արժե 70 ռ., Գյուղացին ունի միայն  
30 ռ., այսինքն 40 ռ. պակասում ե։ Նա  
դիմում ե տալիս ընկերությանը և 40 ռ. փո-  
խատվություն ե խնդրում։ Այդ դեպքում վոչ  
ընկերությունը պետք է 40 ռ. պակաս տա, և  
վոչ ել անդամը դրանից պակաս վերցնի, վո-  
րովհետեւ, ինչպես ասացինք, միևնույն ե, գյու-  
ղացին չի կարող այդ գումարով կով գնել, և  
փողը իզուր կըծախսվի վոչ պետքական բաների  
վրա։

Ընկերությունը կարող է փոխատվությունը  
տալ ստացող անդամին նրա սննձնական վստա-  
հությամբ, ստորագրություն վերցնելով նրանից,  
յեթե վարչությունը լավ է ճանաչում նրան,  
իսկ յեթե չի ճանաչում փոխառուին, կարող ե  
վորեն վստահելի անձնավորության կամ հիմ-  
նարկության յերաշխավորություն պահանջել,  
վոր փոխառուն ժամանակին կըվերադարձնի իր  
պարտքը։ Վերջապես, վարչությունը կարող ե  
սպայման գնել, վոր փող վերցնողն իր վստահե-  
լիությունը հաստատելու համար, ներկայացնի  
ընկերությանն, իբրև գրավ, վորեն առարկա կամ  
առլրանք, վորն ընկերությունը կարող է ծախել,  
յեթե փոխառուն ժամանակին չը վերադարձնի  
վերցրած գումարը։

Այն առարկաները կամ ապրանքը, վոր գրավի են դրվում (հաց, բամբակ, գինի և այլն), սովորաբար, հանձնվում են ընկերությանն ի պահ, բայց պատահում ել ե, վոր թողնում են փոխառութի մոտ, նկատի ունենալով, վոր նրան պետք են դալիս գրավ գրված իրերը: Իհարկե, փոխառուն իրավունք չունի այդ իրերը վոչ ծախել և վոչ ել տալ ուրիշին, մինչև վոր պարտքը լիովին չըվճարի, և բացի գրանից, նա պետք ե հոգ տանի, վոր այդ իրերը չըփչանան, չըկորչեն:

Անդամին փոխատվություն տալու ժամանակ վարչությունը հանում է տոկոսները, հաշվելով մինչև փոխատվության ժամկետի վերջը՝ կամ մինչև առաջին մասնակի վճարման ժամանակը, յեթե փոխատվությունը մասմաս վերադնելու պայմանով է տրված փոխառությունը՝ Տոկոսների չափը, այսինքն այն, թե տարին քանի կոպեկ պետք է պահել ամեն մի ուռելուց, վորոշում է անդամների ընդհանուր ժողովը:

Փոխառուն կարող է վճարել իր ամբողջ պարտքը կամ նրա մի մասը մինչև ժամկետը լրանալը: Այդ դեպքում փոխառությունը վերադարձնել վճարված տոկոսները զոհել մինչեվ ժամկետը մնացած լիվ ամիսների համար:

Յեթե փոխառութի հետ վորեւ փորձանք է պատահում, և նա չի կարողանում փոխատվու-

թյունը ժամանակին վերադարձնել, այդպիսի  
փոխառուն պետք է մինչեվ ժամկետը լրանալը  
դիմի ընկերության վարչությանը յեվ խնդրի  
ժամկետը հետաձգելու մասին։ Վարչությունը  
կըքննի գործի հանգամանքները, և յեթե այդպի-  
սիները հարգելի ճանաչի, կարող ե վորոշ ժա-  
մանակով հետաձգել փոխատվության ժամկետը։  
Յեթե փոխատվությունը տրված ե ուրիշի յե-  
րաշխավորությամբ, հարկավոր ե նաև յերաշխա-  
վորի համաձայնությունը ժամկետը հետաձգելու  
համար, կամ փոխառուն պետք ե ուրիշ յերաշ-  
խավոր գտնիր։ Բայց պետք ե լավ իմանալ, վոր  
ժամկետի հետաձգումը լինում ե միայն հազվա-  
գյուտ դեպքերում։

Այս դրության մեջ ե ժամկետը հետաձգե-  
լու հարցը։ Իսկ ինչ վերաբերում ե ժամկետանց  
փոխատվություններին, այսինքն, յերբ փոխա-  
ռուն, առանց մի խոսք ասելու վարչությանը,  
առանց նախորոք զգուշացնելու, փոխատվությունը  
ժամանակին չի վերադարձնում, ապա այդ  
յերեվույթը պետք է համարել միանգամայն ան-  
թույլատրելի, յեվ պետք ե դրա դեմ կռվել բոլոր  
ուժերով։ Իսկ յեթե պատահի մի արդպիսի յերե-  
վույթ, այդ դեպքում ընկերության վարչու-  
թյունը պարտավոր ե ձեռք առնել ամենավճռա-  
կան միջոցները փոխատվությունը բռնագան-

ձելու համար, վորովհետեւ այլապես շատերն այդպես կը վարվեն, յեվ դրանից ընկերությունը միայն կը վայֆայվի, յեվ ինքը հնարավորություն չի ունենա իր պարտերը վճարելու: Վերջապես, ինչ ընկերության անդամ են նա, վորը վոչ միայն պարտքը ժամանակին չի վերադարձնում, այլև նեղություն չի քաշում մտնելու ընկերության գրասենյակը և խորհրդակցելու վարչության հետ պարտքը հետաձգելու մասին, յեթե նրա հետ վորեւ փորձանք են պատահել: Այդպիսի անդամն իր ընկերներին ել շատ վատ դրության մեջ կարսղ են դնել, ուստի և այդպիսիների հետ չպետք են շատ փափուկ վարվել:

Որենքը և կանոնադրությունը հնարավորություն են տալիս ընկերության վարչությանը նման դեպքերում կարծ ժամանակում բռնազանձել ժամկետանց փոխատվությունները, և վարչությունը պետք է այդ բանն անի:

4. Ծնկերությունն իր անդամների հանձնարարությամբ յեվ նրանց նաևվին կարող են նրանց ՏԵՍԵԿՈՒԹՅԱՆ համար անհրաժեշտ իրեւ ձեռք բերել, ինչպես յեվ վաճառահանել (ծախել) նրանց ՏԵՍԵԿՈՒԹՅԱՆ արտադրանիքը (ՄՔԵՐՖԸՆԵՐԸ)

Ամենքն ել զիտեն, վոր կարելի յե շատ բան առնել և շատ եժան ու լավ առնել յե-

թե մեծ քանակությամբ ես առնում, և ընդհակառակը, շատ ձեռնտու պայմաններով կարող ես ծախսել ապրանքգի, յեթե դարձյալ մեծ քանակությամբ ես ծախսում։ Որինակ՝ սերմացուի, լծկանի, գործիքների կարիք ունեն շատ գյուղացիներ, և վոչ թե մեկը։ Փոխանակ գյուղացիներն իրենք գնան իրենց հարկավոր իրերն առնելու, այն ել գուցե գործի յեռուն ժամանակը, ավելի լավ ե, վոր բոլորը միասին այդ գործը հանձնարարեն ընկերությանը, վորը կարող է բոլորի համար ել ձեռք բերել այն ամենը, ինչ վոր նրանց հարկավոր ե։ Հենց այն, վոր գյուղացիները մեկ-մեկ չեն գնա քաղաք և ծախս անի, դա արդեն եժանացնում ե նրանց ձեռնարկը։ Ահա և այս գործը հանձնելով ընկերությանը, անդամները պետք ե վորոշ կանխավճար տան ընկերությանը, վորովհետեւ կարող ե պատահել, վոր ընկերությունը գնի անդամների ապսպրած իրերը, իսկ անդամները, պատվերը տալուց հետո, վոշմանեն և ել չընդունեն ընկերության ձեռք բերածը։ Ուրեմն, ընկերությունը պետք ե վեաս անի, իսկ դա չի կարելի, վորովհետեւ ընկերության վեասը հենց անդամների վեան ե։ Անդամները պետք ե լավ մտածեն յեվ նետ պատվեր տան ընկերությանը,

յեվ պատվեր տալուց հետո ել նշանի պես ե պա-  
տասխանառու լինեն քոլոր հաշիվների համար:

Իհարկե, ընկերության գարչության մեջ  
պետք ե հմուտ և փորձված մարդիկ լինեն և  
այնպիսի ապրանք ձեռք բերեն անդամների հա-  
մար, վոր ապրանքը վատ չլինի և նրանք դժգոհ  
չըմնան: Վարչությունը պես ե աշխատի թե լավ  
ապրանք առնել յեվ թե՛ եման: Առհասարակ,  
այդ հարցում պետք ե շատ զգուշ լինել, վոր-  
պեսզի անդամներն իզուր վնաս չըկրեն:

Ընկերությունն իրավունք չունի իր հաշվին  
առևտուր անել, վորովհետև դա վտանգավոր ե  
այն մարդկանց համար, վորոնք իրենց փողը  
վստահել են ընկերությանը, այսինքն ավանդ տը-  
ված գյուղացիների համար: Զե՞ վոր մենք գի-  
տենք, վոր առևտուր անողը կարող ե վնասվել,  
զիտենք, թե վորքան փոփոխական են զները  
շուկայում: Իսկ ուրիշի փողով, ինարկե, չի կա-  
րելի վաճակալոր զործով պարապել: Այն ժա-  
մանակ վոչ վոք իր փողը չի վստահի ընկերու-  
թյանը:

Ուրիշ բան ե, յեթե ընկերությունը հատ-  
կապես այդ նպատակով վորոշ գումար ե հավա-  
քել, կամ անդամներն այդ նպատակով վորոշ  
գումար են տվել ընկերությանը, այդ դեպքում  
յերկուղալի չե բոլորովին առևտուր անելը: Ան-

հաջողության դեպքում, շատ-շատ կարող ե փողը կորչել բայց դրա հետևանքով չեն տուժիւայն հիմնարկություններն ու անձնավորությունները, վորոնք վստահել են իրենց փողն ընկերությանը:

Ընկերության բոլոր անդամները պետք են հսկեն, վոր իրենց ընկերությունն իր հաշվին առելքուր չանի, մի բան, վոր շատ ե պատահում: Վորովհետեւ փորձը ցույց ե տալիս, վոր այդ տեսակի առելքուրը մեծ մասամբ վճարվել վերջանում:

Ընկերության միջոցով ապրանք ծախելն ավելի հեշտ ե: Աշնանը, յերբ զները ցածր են լինում, ընկերության կարիք ունեցող անդամնիր հացը, զինին և այլն հանձնում ե ընկերությանը և դիմացը փոխատվություն ե ստանում: Նա հանձնարարում ե ընկերությանը ծախել իր մթերքն այն ժամանակ, յերբ զները կըրարձրանան: Յեվ յերբ ընկերությունը ծախում ե իրեն հանձնված մթերքները, նա փոխատվության գումարը հանում ե, իսկ մնացածը տալիս ե ապրանք տված անդամին: Այդ տեսակի առետությունը պետք ե ասել, վոր մեծ ոգուն ե տալիս ընկերության անդամներին:

Անդամների ապրանքը վաճառելիս (ծախելիս) ընկերությունը նմանապես իրավունք չունի

ողտվելու իր սեփական փողերից։ Ապրանք ծախելն ել պետք ե կատարվի նույն պայմաններով, ինչ վոր ապրանք առնելը։ Առհասարակ պետք ե հիշել, վոր ընկերությունը գործ ե անում ուրիշի փողով, դրա համար ել նա պես է զգուշ վարվի ուրիշի փողի հետ, այլապես վսահություն չի լինի դեպի ընկերությունը։ Ընկերության կանոնադրությունն անպես ե կազմված, վոր ընկերությանը թույլ ե տրվում միայն այնպիսի գործեր անել, վոր դրանից չտուժեն այնքոլոր մասնավոր մարզիկ և հիմնարկությունները, վորոնք իրենց փողը վստահել են ընկերությանը։ Յեկ ընկերության բոլոր անդամները պետք ե պահանջեն ընկերության վարչությունից, վոր նա ճշտությամբ հետեւի կանոնադրությանը։

## ԽԶՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք բոլորս ասում ենք, վոր ընկերության գործը՝ միաբանված գյուղացիների, այսինքն ընկերության անդամների գործն է, վոր անդամներն են ընկերության տերը, վոր ամեն մի անդամն ընկերության մի մասն է, վոր նա պետք ե հետեւի ընկերության գործերին, թույլ

շտա, վոր վարչությունը կանոնադրությամբ արդելիած գործեր անի, սխալ ճանապարհով գնաւ:

Իսկ ինչպես անել, վոր ընկերության անդամներն, իրոք, կարողանան կառավարել ընկերությունը, կարողանան նրա տերը դառնալ:

Դրա համար ել սահմանված ե ընկերության անդամների ընդհանուր ժողով, վորին ամեն մի անդամ վոչ միայն կարող ե, այլև պետք ե մասնակցի: Ընկերության ամեն մի անդամ, ով ել նա լինի, ամեն հարց ել քննելիս, մի ձայն ունի ժողովում, վորտեղ ընկերության բոլոր կարևոր գործերն են քննության առնվում:

Հետևաբար այդ ընդհանուր ժողովի միջոցով ընկերության ամեն մի անդամ, մասնակցելով այդ ժողովին, կարող ե և պետք ե ուղղություն տա նրան, պետք ե այնտեղ ասի ու խոսի այն ամենի մասին, ինչ նա ողտակար ե համարում ընկերության համար:

Դժբախտությունը հենց այն է, վոր շատերը չեն հասկանում այդ բանը և ընդհանուր ժողովներին չեն գնում: Այդպիսիները միայն մի հոգս ունեն. թող ընկերությունը փոխատվություն տա նրանց, իսկ թե վորտեղից ե ընկերությունն այդ փողը ճարռում, ինչպես և վարչությունն այդ փողերը բաժանում անդամների մեջ, այդ բոլորը նրանց չի հետաքրքրում: Իսկ հենց վոր մի

պորձանք եւ պատահում, հենց վոր ընկերությունը միաս եւ ունենում, այդ ժամանակ բոլորը վաղում են ընդհանուր ժողով, աղմուկ են բարձրացնում, դժգոհում և հայտարարում, վոր իրենք վոչ մի մեղք չունեն այն բանի համար, վոր ընկերությունը միաս եւ կրել, վոր վերջապես, իրենք չեն ել իմացել, թե ինչ եւ կատարվում ընկերության մեջ։ Իսկ նրանք վոչինչ չեն իմացել ընկերության գործերի մասին այն պատճառով, վոր յերբեք չեն յեղել ընդհանուր ժողովներում։

Յեվ արդարացի կրթնեն նրանք, ովքեր կը պատասխանեն. «Իսկ ի՞նչու եյիք մինչև հիմա հեռու կանգնել, և չեյիք հետաքրքրվում ընկերության գործերով։ Ի՞նչու չեյիք գալիս ժողովի, չեյիք մասնակցում վարչության և խորհրդի ընտրություններին, չեյիք ընտրում վստահելի մարդկանց, չեյիք հետաքրքրվում ընկերության անելիքներով, նրա ծրագրներով և հիմա յեկելու դժգոհում եք։ Մեղքը ձեզն ե»։

Պատահել ե, վոր նման դեպքերից հետո, անդամներն սկսել են կանոնավոր հաճախել ընդհանուր ժողովները, մոտիկից հետաքրքրվել են ընկերության գործերով և դրանից միայն լավարդյունք ե ստացվել։

Ուրեմն, վորապեսզի ընկերության գործերը

լավ դրության մեջ լինեն, վորապեսզի ընկերությունը վասա չը կրի, պետք է վոչ միայն ներկայինել ընդհանուր ժողովներին, այլ նույնիսկ պետք է պահանջել, վոր այդպիսի ժողովները, վորքան կարելի յեւ ըուտ-ըուտ գումարվեն: Յեւ միայն հաշիվ պահանջելու համար չե, վոր պետք է ժողովի զնալ, այլ պետք է մոտիկից ծանոքանալ բոլոր հարցերին:

## ԻՆՉՊԻՍԻ ՀԱՐՑԵՐ Ե ՎՃՈՌԻՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Կանոնադրության մեջ մեկ-մեկ թված են այն բոլոր հարցերը, վոր պետք եւ լուծի ընդհանուր ժողովը, առանց վորի այդ հարցերը չի կարելի լուծել: Մենք այստեղ կը խոսենք ամենազլամավոր հարցերի մասին:

1. Վարչության, խորհրդի, վերսուցիչ հանձնաժողովի անդամների յեվ նրանց տեղակալների ընտրությունը

Ընկերության անդամների ընդհանուր ժողովը, վոր գումարվում եւ ժամանակ առ ժամանակ, իհարկե, չի կարող ինքն ամբողջ ընթացիկ աշխատանքը կատարել: Դրա համար ընդհա-

նուր ժողովս իր միջից ընտրում ե մի քանի  
մարդ, սովորաբար յերեք հոգի, վորոնք միասին  
վարչություն են կազմում և գործում են ընդ-  
հանուր ժողովի լիազորությամբ։ Վարչության  
աշխատանքներին հսկելու և վորոշ հարցեր նրա  
հետ միասին վճռելու համար ընդհանուր ժողո-  
վին ընտրում ե նաև խորհուրդ։ Բացի դրանից  
ընտրվում ե վերստուգիչ հանձնաժողով, վորը  
քննում ե ընկերության գործերը։

Ընկերության յուրաքանչյուր անդամ պետք  
է առանձին ուսալրությամբ վերաբերվի դեպի  
վարչության յեվ խորհրդի անդամների ընտրու-  
թյունը, վորովհետև ընկերության գործերի անմի-  
ջական դեկավարությունը հանձնվում ե նրանց։  
Ճիշտ ե, վարչության գործերին հսկում ե խոր-  
հուրդը և, վերջապես, ընդհանուր ժողովս ել ե  
հետևում նրա գործերին, բայց և այնպես պետք  
է միշտ հիշել, վոր վարչության համար հաջող  
կազմ ընտրելը մեծ նշանակություն ունի ընկե-  
րության գործունեյության համար, վոր բարե-  
խիղն յեվ փորձված վարչությունը մեծ ոգուն  
կը սա ընկերության անդամներին, կը ծաղկե-  
ցնի ընկերությունը, իսկ, ընդհակառակը, յեթե  
անբարեխիղն մարդիկ ընտրվեն վարչության մեջ,  
ընկերության գործերը լավ դրության մեջ չեն  
լինի, ընկերությունը վնասներ կը կրի, կը թու-

լանս, և վերջը կը տուժեն ընկերության անդամները։ Նշանակում ե, ընկերության բոլոր անդամներն ել հավասար չափով շահագրգոված են, վոր վարչության մեջ ընտրվեն հարմար մարդիկ։ Իսկ ընտրությունը վերջանալուց հետո, յեթե մեկը դժոհն ե ընտրված վարչությունից, և յեթե նա բողոքի, ապա նրա բողոքը վոչ վոք չի լսի և անհետևանք կը մնա։ Վորովհետև նման բողոքներին շատ արդարացի կերպով կը պատասխանեն. «Իզուր ես դժոհում, չե՞ վոր ինքը ես վարչություն ընտրել, վոչ վոք քեզ չե՞ հրամայել, թե ընտրիր սրան, և վոչ՝ նրան»։ Նշանակում ե, պետք ե ժամանակին լավ մտածել, թե ում պետք ե ընտրել, և այդ մասին համաձայնության գալ մյուս անդամների հետ և ընդհանուր համաձայնությամբ հարմար թեկնածուներ առաջարկել ընտրելու համար։ Պետք ելավ հիշել այս առածը. «յոթ չափիր, մեկ կտրիր»։

Հիմա ել խոսենք վարչության անդամների թեկնածուների մասին։ Սովորաբար, թեկնածուների ընտրությանը լուրջ չեն վերաբերվում, մատերի արանքով են նայում։ Դա սխալ է, վորովհետև չպետք ե մոռանալ, վոր թեկնածուն ամեն ժամանակ կարող է փոխարինել անդամին, իսկ այդ նշանակում ե, վոր նա ել պես ե ունենա այն բարեմասնությունները, վայելի այն

վլսահուրյունը, ինչ վարչության անդամները:  
Ինչ վերաբերում ե խորհրդի անդամներին,  
դրանց պետք ե այն ձևով ընտրել, վոր ամեն  
մի շրջան, վորտեղ տարածվում ե ընկերության  
գործունեյությունը, իր ներկայացուցիչն ունի-  
նա խորհրդի կազմի մեջ, և ինարկե, այդ դեպ-  
քում ել պետք ե ընտրել միայն այնպիսի մարդ-  
կանց, վորոնի շշանում լավ համբավ ունին:

Վարչության անդամներ ընտրելիս չպետք  
ե մոռանալ, վոր գյուղացիներն իրենց փողը կը  
վստահեն ընկերությանն այն դեպքում միայն,  
յեթե վարչության մեջ լինեն ծանոթ մարդիկ,  
և յեթե այդ մարդիկ շրջանում վստահություն  
և բարի անուն ունեն:

## ՆԱԽԱՀԱՇԻՎ ՀԱՍՏԱՏԵԼԸ, ՅԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ, ԽՈՐ- ՀՐԴԻ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆ- ԴԱՄՆԵՐԻՆ ՎԱՐՉԱՏՐԵԼԸ

Ծախսերի նախահաշիվը մի ծրագիր ե, թե  
ընկերությունը մոտավորապես ինչքան և ինչ-  
պիսի ծախսեր ե ունենալու իր աշխատանքները  
կատարելու համար: Զե՞ վոր հազար ու մի կո-  
րիք ե ունենում ընկերությունն իր զրասենյա-  
կը, իր դործերը կառավարելու համար: Ծնկե-

բության գրասենյակին թուղթ, հաշվապահական գրքեր, գրիչ, մատիտ և այլ պիտույքներ են հարկավոր։ Փող ե հարկավոր գրասենյակի շենքի վարձը տալու, վառելիքի, լուսավորության համար։ Հարկավոր ե վարձատրել վարչության և յերբեմն խորհրդի անդամներին, հաշվապահին և մյուս ծառայողներին։ Ընդհանուր ժողովը պետք ե վորոշի, թե ինչքան ծախս կը լինի այդ բուլորի համար, մեկ տարվա ընթացքում։ Այդ հարցին պետք ե զգուշությամբ մոտենալ, այնպես, վոր հանկարծ չը դուրս գա, վոր ընկերության ծախսն ավելի շատ ե, քան նրա յեկամուտը, վորովհետեւ այդպիսով վերջը վնաս կը ստացվի։ Իսկ ընկերությունը պես ե անպահառ աշխատի առանց վնասի։ Վորպեսզի վնաս չըլինի, պետք ե մեկ-մեկ հաշվել, թե մոտավորապես ինչքան յեկամուտ կունենա ընկերությունը, հետո ել, ինչքան նա պետք ե տոկոս վճարի իր պարտքերի դիմաց, և վերջն ինչքան ազատ յեկամուտ կը մնա։ Յեվ ինչքան ազատ յեկամուտ մնա, այնքան ել, և վոչ ավելի, պետք ե թույլ տալ, վոր ընկերությունը ծախսի։ Զը մոռանանք նաև այն, վոր մաքուր յեկամուտի մի մասն ել պետք ե հետ դրվի վորպես պահեստի գումար։

Սկզբում քիչ յեկամուտ կը լինի, և դրա հա-

մար ել ծախսերի նախահաշիվը փոքր կրկինի:  
Ակզբում աշխատանք քիչ կը կնի և վարչությու-  
նը կը հավաքվի շաբաթը մեկ-յերկու անգամ,  
ուստի և նրա անդամները կարող են 1-2 ամիս  
աշխատել ընդհանուր գործի համար, յեթե վոչ  
ձրիաբար, գոնե փոքրիկ վարձատրությամբ: Հետո  
կարելի յե ոռօճիկ նշանակել վարչության մեկ  
անդամի համար, վորը միշտ աշխատելու յե ըն-  
կերության գրասենյակում, իսկ այնուհետեւ, յերբ  
ընկերությունը մեծանա, գործերը շատանան, և  
ընկերության յեկամուտն ել ավելանա, կարելի  
յե ընդհանուր ժողով գումարել և վարչության  
բոլոր աշխատող անդամների համար իսկական  
վարձատրություն նշանակել, նրանց հանձն ա-  
ռած պարտականությունների, նրանց կատարած  
աշխատանքի համեմատ:

Ուրիշ ե, որինակ, վարձու հաշվապա-  
հը, յեթե վարչության անդամներից վոչ մեկը  
չի կարողանում նրա գործը վարել: Ասկած ե,  
վոր «փողը հաշիվ ե սիրում», և դրա համար ել  
հենց սկզբից պետք ե հաշվապահությունը լավ  
հիմքերի վրա դնել, այնպես, վոր հաշիվները չը  
խառնվեն. Իսկ դրա համար խելքը գլխին մարդ  
ե հարկավոր: Պետք ե նրանից պահանջել, վոր  
նա գործերը կանոնավոր վարի, բայց և պետք  
ե նրան լավ վարձատրել դրա համար:

# ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԵԼԸ ՅԵՎ ՀԱՍՏԱՏԵԼԸ

Ամեն տարի վարչությունը պետք է հաշիվ տա ընդհանուր ժողովին անցած տարվա գործերի մասին։ Ընկերության ամեն մի անդամ պետք է ուշադրությամբ վերաբերվի դեպի այդ հարցը, և յեթե վորևե քան նրա համար անհասկանալի լինի, պետք է խնդրի, վոր հասկանալի խոսքերով նրան բացատրեն այդ։ Պետք է նախ լսել, թե ինչ կասի խորհուրդը հաշվետվության մասին, վոր նա մինչ այդ հաստատում է։ Բացի դրանից, ընդհանուր ժողովում կարդում են նաև վերստուգման արձանագրությունը։ Յեթե հաշվետվությունը վոչ մի կասկած առաջ չի բերում, պետք է հաստատել այն։ Իսկ յեթե կասկածներ կան հաշվետվության այս կամ այն մտոի ճշշտության վերաբերյալ, պետք է կասկածելի կետերը հանձնել վերստուգիչ հանձնաժողովին, վոր նա նորից նայի այդ մասը, և պարզելուց հետո միայն պետք է նորից քննության առնել և հաստատել։

Համաձայն ընկերության կանոնագրության, ընդհանուր ժողովը գումարում է վարչությունը, խորհուրդը՝ կամ վերստուգիչ հանձնաժողովը՝ հարկ յեղած դեպքերում, բայց ամենաքիչը

տարին մեկ անգամ, Բայց յեթե ընկերության անդամները պահանջեն, վարչությունը դարձյալ պետք է ընդհանուր ժողով գումարի։ Դրա համար հարկավոր է, վոր ընկերության անդամների զոնե տասյերբորդ մասը (որինակ, յեթե անդամների թիվը 500 է, պետք է հետևաբար 50 ստորագրություն լինի) մի ընդհանուր դիմում տա վարչությանը և պահանջի, վոր ընդհանուր ժողով գումարվի։

Ընդհանուր ժողովը կայացած յեվ որինական է համարվում, յերե ժողովում ներկա յեն գՏնվում վոչ պակաս, քան կանոնադրությամբ նախատեսնված թվով անդամներ (սովորաբար անդամների ընդհանուր թվի կեսը)։ Իսկ յեթե այդ թվով անդամներ ներկա չեն լինում, այդ գեղաքում ժողովը հետաձգվում է և հրավիրվում երերկրորդ ժողով, վորը կայացած յեվ որինական է համարվում անկախ ներկաների թվից։

Այսպիսով, կարող է պատահել, վոր ընկերության յուրաքանչյուր անդամի համար շատ կարևոր հարցերը վճռվեն մի խումբ մարդկանց կողմից, վորոնք կարող են և չիմանալ անդամ, թե հարցի վորպիսի լուծումն ավելի ձեռնտու յեանդամների մեծամասնության համար։ Յեվ վորպիսի նման բան տեղի չունենա, հարկավոր է,

վոր բոլոր անդամներն ել ներկա լինեն ընդհանուր ժողովներին:

Յեթե ընկերության անդամների թիվը շատ մեծ է, այդ դեպքում կանոնադրությունը թույլ է տալիս անդամների ընդհանուր ժողովը փոխարինել լիազորների ժողովով։ Դա նշանակում է, վոր մոտավորապես ամեն մի 10 անդամի կողմից ընտրվում է մեկ լիազոր և ընդհանուր ժողովին մասնակցում են միայն լիազորները։ Բայց, իհարկե ավելի լավ է, վոր ամեն մի անդամ ինքը անորինի իր ընկերության գործերը։

Ընդհանուր ժողովը կառավարելու համար անդամներն իրենց միջից ժողովի նախագահ են ընտրում, վորն անկողմնապահության համար, չոր պետք է լինի վոչ վարչության, վոչ խորհրդի, յեվ վոչ ել վերսուվիչ հանձնաժողովի անդամներից։ Ժողովի նախագահ պետք է ընտրել փորձված, բոլորի կողմից հարգված մարդկանցից, վորովհետև ժողովի ընթացքում բոլորը պետք են յենթարկվեն նախագահին։

Ընդհանուր ժողովում ներկա գտնվող ամեն մի անդամ, յեթե համաձայն չե մեծամասնության՝ այս կամ այն վորոշմանը, կարող ե իր համաձայն չը լինելու մասին հայտարարություն անել և միաժամանակ պահանջել, վոր նրա ա-

ուանձին կարծիքը դրվի ընդհանուր ժողովների  
արձանագրությունների դրբում:

## ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մենք արդեն ասացինք, վոր վարչությունը  
վարում է ընկերության ընթացիկ, ամենորյա-  
գործերը: Ընդհանուր ժողովը, ընկերության  
տերը, վարչություն բնուրելով, իրավունք է տա-  
լիս նրան ընկերության անունից կատարել այն  
ամենը, ինչ թույլատրվում է կանոնադրությամբ:  
Ուստի և ամեն մարդ, վորը գործ ունի ընկե-  
րության հետ, լինի նա անդամ, թե կողմնակե-  
անձնավորություն, պետք է դիմի վարչությանը,  
վորը կառավարում է ընկերության բոլոր գոր-  
ծերը:

Վարչությունը բաղկացած է լինում ամե-  
նաքիչը յերեք անդամից, վորոնք գործում են  
միասին, իրար հետ խորհրդակցելով:

Զի կարելի քոյլ տալ, վոր վաշտրյան  
անդամներից մեկը լինի գործերի տերն ու Տնո-  
րենը, իսկ մյուսները, հենց այնպես, ընուհելի հա-  
մար նաև այնուելու: Դրանից շատ մեղքեր կա-  
րող են պատահել: Բացի դրանից, առհասարակ  
յերկույթերի հոգին ավելի խելացի, ավելի լավ

կը կառավարեն, քան մեկ մարդը։ Զպետք ե  
մոռանալ, վրբ վարչության նախագահն իշխա-  
նափոր չե, այլ վարչության անդամների ավագ  
ընկերը, վորն առանց մյուսների չպետք ե տը-  
նորինի ընկերության գործերը։

Իրենց գործունեյության մասին վարչու-  
թյան անդամները հաշիվ են տալիս ընդհանուր  
ժողովին և պատասխանատու յեն նրա առաջ։

Վարչության անդամներին մեծ իրավունք-  
ներ են տրվում, բայց նրանցից շատ ել պահանջ-  
վում եւ Ցեթե նրանք չը կատարեն իրենց  
պարտականությունները, և դրանից ընկերու-  
թյունը վնասներ կրի, այդ դեպքում վարչու-  
թյան անդամները միասին պատասխանատու  
յեն ընկերության վնասների համար։

Ծնկերության ամեն մի անդամն առանձին  
չի կարող առանց ընդհանուր ժողովի, վորևե  
ցուցմունք տալ ընկերության վարչությանը, մի-  
ջամտել նրա գործերին, խանգարել նրան, բայց  
նա ևս կարող ե, ինչպես և կողմնակի մարդիկ,  
վարչության դեմ բողոքել ընկերության խոր-  
հրդին, իսկ խորհրդի վորոշումների դեմ բողոքել  
ընդհանուր ժողովին, վորից արդեն կախված ե  
հայցի վերջնական լուծումը։

Ընկերության մեջ խորհուրդ եւ ընտրվում  
Նրա համար, վոր հսկողություն լինի վարչու-  
թյան վրա, վորպեսզի վարչությունը որենքի և  
կանոնագրության հակառակ բան չանի, վոր նա  
ճշտությամբ կատարի ընդհանուր ժողովի վորո-  
շումները, վոր նա պաշտպանի ընկերության  
անդամների շահերը, Այն դեպքում, յեթե խոր-  
հուրդը սկարզի, վոր վարչության վորեւ անդա-  
մըն որենքին հակառակ բան եւ արել, ի չարն եւ  
գործ դրել իր իրավունքները, զեղծում եւ գոր-  
ծել, կարող եւ հեռացնել վարչության այդ ան-  
դամին և ընդհանուր ժողով հրավիրել:

Բացի դրանից, խորհուրդը վարչության հետ  
միասին վորոշ գործեր եւ կարգադրում, որինակ,  
վորոշում են, թե ինչքան վարկ կարելի յեւ բա-  
նալ այս կամ այն անդամի համար: Ինչպես ա-  
սացինք, խորհրդի կազմի մեջ, սովորաբար, ըն-  
տրվում են բոլոր ըջաններից, այնպես, վոր խոր-  
հութի անդամներից մեկն ու մեկն անպատճառ  
անաշում եւ այս կամ այն անդամին:

Խորհուրդն ողտակար եւ մեկ ել նրա հա-  
մար, վոր նա ընդհանուր ժողովի աշխն ե, հե-  
տեւում եւ վարչության բոլոր գործերին, ծա-  
նոթանում եւ նրանց հետ և ընդհանուր ժողո-

վում իր կարծիքն եւ հայտնում վարչության  
գործունեյության մասին:

## ԻՆՉՊԵՍ ԵՆ ՔՆՆՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Վարչության գործերը քննում եւ վերստու-  
գիչ հանձնաժողովը, վորը տարին մի քանի ան-  
դամ, իսկ յերբեմն ամեն ամիս ստուգում եւ ըն-  
կերության գրքերը, փողերը, ստացականները և  
մյուս արժեքավոր թղթերն ու իրերը: Պատա-  
հում ե, վոր այդպիսի վերստուգություն կա-  
տարվում եւ և հանկարծակի: Տարեվերջին վեր-  
ստուգիչ հանձնաժողովը վարչության հաշվե-  
տվությունը համեմատում եւ գրքերի հետ, վոր-  
պեսզի պարզի, համապատասխանում եւ արդյոք  
հաշվետվությունը յեղած փաստաթղթերին, թե՛  
վոչ, վորից հետո միայն հաշվետվությունը ներ-  
կայացվում եւ խորհրդին և ընդհանուր ժողովին իր  
հաստատություն: Բացի գրանից, ընկերության  
գործերը քննվում են նաև դյուղբանկի տեսուչ-  
ների կողմից, վորոնք ամենաքիչը տարին յերկու  
անգամ տեղն ու տեղը քննում են վարչության  
գործերը: Ընկերության գործերը նաև քննվում  
են Հայգյուղկողի և Ֆինժողկոմատի ներկայա-  
ցուցիչների կողմից, հարկ յեղած դեպքերում  
կատարված քննության մասին արձանագրու-

թյուն ե կազմվում, վորը և կարդացվում ե լն-  
կերություն անդամների ընդհանուր ժողովում:  
Ժողովը պետք ե քննի և վորոշի այն հարցը,  
թե ինչպես պետք ե անել, վոր հետագայում  
ընկերությունն ազատվի յեղած թերություն-  
ներից:

## ՇԱԼ ՅԵՎ ՎՆԱՍ

Տարին վերջանալուց հետո վարչությունը  
պետք ե հաշվի ընկերության բոլոր յեկամուտ-  
ները և ծախքերը, վոր յեղել են մի տարվա ըն-  
թացքում: Յեթե պարզվի, վոր յեկամուտներն  
ավելի յեն, քան ծախքերը, նշանակում ե, վոր  
ընկերությունը մաքուր շահ (վաստակ) ե ունե-  
ցել, իսկ, ընդհակառակը, յեթե պարզվի, վոր  
ծախսն ավելի յե յեկամուտից, նշանակում ե,  
վոր ընկերությունը պատճեն ե արել:

Մաքուր շահը պետք ե բաժանել այնպես,  
ինչպես ասված ե կանոնադրության մեջ, այ-  
սինքն՝ մի մասը պետք ե թողնել վորպես հիմ-  
նական դրամագլուխ, մի մասը հատկացնել պա-  
հեստի դրամագլուխի համար, իսկ մնացածը, ընդ-  
հանուր ժողովի վորոշմամբ կարող ե գործադրո-  
վել կրթական և զանազան այլ հանրոգութ գոր-  
ծերի համար:

Վնաս լինելու դեպքում, վնասը ծածկվում  
ե ընկերության համապատասխան հատուկ գու-  
մարներից, կամ, ինչպես ասում են, հատուկ դը-  
րամագլուխներից։ Այն դեպքում, յեթե հատուկ գու-  
մարները չեն բավականացնում, վնասը ծած-  
կվում ե մյուս տարվա շահից։ Իսկ յեթե այս  
ճանապարհով ել վնասը չի ծածկվում, ընդհա-  
նուր ժողովի վորոշմամբ վնասը բաժանվում է  
անդամների մեջ, իբրև լրացուցիչ պատասխանա-  
տվություն։


Իհարկե, լավ ե, յեթե ընկերությունն աշ-  
խատում ե առանց վնասի և նույնիսկ վորոշ  
շահ ե ստանում, վոր հնարավորություն կըտա-  
նրան գործը զարգացնելու և ամրապնդելու։ Այդ  
բանին պետք ե ձգտել, բայց դա բոլորովին չի  
նշանակում, վոր ամեն ինչ լավ ե միայն այն  
դեպքում, յեթե շահ ունի ընկերությունը և,  
ընդհակառակը, ամեն ինչ վատ ե, յեթե վնաս  
կա մեջտեղում։

Մեծ շահի յետեկից ընկնելով կարելի յե-  
հասնեք և այնտեղ, վոր անդամներն ստիպված  
կըլինեն նաև մեծ տոկոսներ վճարել փոխառը-  
վությունների համար։ Դա, իհարկե, լավ չե,  
վորովհետեւ ընկերության նպատակը բոլորովին  
այն չե, վոր շատ ոգուտ ունենամ, մեծ շահ ըս-  
տանա, այլ նրա նպատակն այն ե, վորովհա առանց

վիասի կարողանա եժան վարկ տալ իր անդամներին:

Միանդամայն պարզ ե, վոր վոչ վոք չի ցանկանա, վոր ընկերությունը վիաս կրի, բայց յեթե այդպիսի բան պատահի, մանավանդ նորակազմ ընկերության մեջ, անդամները չպետք ե հուսահատվեն և չպետք է կորցնեն իրենց հավատը դեպի իրենց ոկսած գործը։ Հարկավոր ե միայն քննել և պարզել, թե ինչից առաջ յեկավ վիասը, և հետո խելացի միջոցներ ձեռք առնել կատարված սխալն ուղղելու, վիասը ծածկելու համար, և միաժամանակ այնպես անել, վոր այդ սխալը հետո չկրկնվի, և հետո ամեն մեկն առանձին և բոլորը միասին համերաշխությամբ շարունակեն իրենց աշխատանքն ընդհանուր գործի համար։

Ամեն մի գյուղացի պետք ե դնահատի վարկային ընկերությունը, հասկանա նրա ոգուտը, գիտակցի, վոր առանց այդ ընկերության նրա գործը հաջող չի լինի, նրա տնտեսությունը չի զարգանա։





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039660

[104]

A —  
—  
4534

ԳԻՒԸ 15 ԿՈԹ.